մարդ, անասուն, բոլորը կը սառչեն եւ կը կազմեն մի մեծ սառցային զանգուած:

Ահա այդ ձմեռոայ գիշերներից մէկում, Քօհնա-Շահարի մօտ, մեզ ծանօթ արաբական մինարեթում, քարէ յատակի վրայ կրակ էր վառւում: Մի խումբ զինուած մարդիկ, բոլորած կրակի շուրջը, տաքանում էին: Իսկ մինարեթի դրսում, դռան մօտ, նրանց ձիաները գարի էին ուտում գլուխներից քարշ ընկած տոպրակներից:

Գիշերը մթին էր: Ձիւնային տարափը այնպէս ազատութեամբ մաղւում էր երկնքից, որ մտածում էիր, թէ մի քանի րոպէում ամբողջ երկիրը կծածկէ, կանհետացնէ թանձր խաւի տակ:

Ձիաների մօտ, մէկը, փաթաթուած իւր վերարկոի մէջ, կծկուել էր պատի տակին: Նա անշարժ էր, որպէս արձան, միայն շարժւում էր, երբ թափ էր տալիս վերարկուն, որ իւր վրայ հաւաքուած ձիւնը մի կողմ թափուի, եւ դարձեալ ընդունում էր իւր անշարժ դիրքը: Անշարժ էին եւ նրա աչքերը, կարծես ցուրտը սառեցրած լինէր նրանց: Նրանք նայում էին խաւարի մէջ, միշտ միեւնոյն կէտի վրայ եւ ամենեւին չէին շեղւում դէպի մի այլ կողմ: Ի՞նչ էր դիտում նա այն մթութեան մէջ, աստուած գիտէ, բայց նա շարունակ նայում էր:

Ոչ մի կենդանի արարած այդ միջոցին չկար շրջակայ ամայութեան մէջ, ոչ մի ձայն չէր լսւում, եւ բամբակի նման փափուկ ձիւնային տարափն անգամ ձայն չէր հանում: Մինարեթի ներսում խարոյկի շուրջը խմբուած մարդիկ նոյնպէս ձայն չէին հանում, նրանք միայն ծխում էին:

Դրսում մենաւոր պահակը դեռ նայում էր:

Յանկարծ այն կողմում, որ կողմ յառած էին նրա անշարժ աչքերը, հեռուից երեւաց լոյսի փայլփլող մի նշոյլ: Այդ լոյսը հրեղէն լեզուի նման կանգնած էր բարձր, շատ բարձր, օդի մէջ: Եթէ նրա շառագոյն փայլը չլինէր, կարելի էր մի լուսաւոր աստղի տեղ ընդունել: Բայց երկինքը այդ գիշեր այնպէս ամպամած էր, որ աստղերը բնաւ չէին երեւում:

Հրեղէն լեզուն կանգնած էր միեւնոյն կէտի վրայ, նա երբեմն աճում էր, երբեմն նուազում էր, իսկ երբեմն բոլորովին անյայտանում էր եւ մի քանի րոպէից յետոյ դարձեալ երեւում էր:

Այդ տեսնելով, մենաւոր պահակը ցնցուեցաւ որպէս մի մարդ, որ լարում է իւր ուշադրութիւնը:

Համարեա միեւնոյն վայրկեանում, երբ յայտնուեցաւ առաջին հրեղէն լեզուն, նրա հորիզոնական ուղղութեամբ, մօտ երկու հարիւր քայլ հեռաւորութեան վրայ, յայտնուեցաւ մի այլ լոյս, բոլորովին նման առաջինին: Այդ եր-